

րերով մնացին աւերակ վիճակի մէջ. հոն յաճախող ուխտաւորները ամէնքն ալ սրտի ճմլումով մը կը նկարագրեն տիրող տըխուր վիճակը: 1620ին էր որ Ֆրանչիսկեանք էմիր Ֆախր-էտ-Տինէն գնեցին աւերակ գետինները և 1889ին տեղւոյն տեսուչ Prosper Viaud ի ձեռքով պեղումներ և հետազոտութիւններ կատարուեցան նոյն աւերակներուն մէջ. երեւան ելած են կիսաքանդ պատերն ու հիմերը, ինչպէս նաև շինուածքին մնացորդները որոնք կ'ապացուցանէին Նազարէթի սրբավայրերուն կառուցուածքը: Վանքին ընդարձակութիւնը և Սաչակրաց թուականին հոյակապօրէն կատարուած նորոգութիւնները, որոնցմէ կը հասկցուի թէ արեւմտեան քանդակագործութիւնը մեծ չափով գործադրուած է սրբավայրերու կամարներուն, սիւներուն և ամբողջ շինուածքին տարածութեան վրայ, տեղական արուեստէն դուրս, Սաչակիր վարպետներու ճարտարութիւնը կը փայլեցնէին պեղումներէն դուրս բերուած քանդակագործ բեկորներուն մէջ: Անակնկալօրէն պեղումներէն դուրս ելած պատկերաքանդակ ու զարդարուն իննգ խոյակները քանդակագործութեան պատմութեան հայելիներ են՝ որոնց մէջ կը տեսնուին արեւմտեան արուեստին նրբութիւնը, ճաշակն ու զարգացումը. հինգ խոյակներէն մին աւելի մեծ էր քան միւսները, որոնք ութանկիւնային են. երեքին քանդակները կը պատկերացնեն Փրկչին ու առաքելոց մասին Աւետարանէն և Գործք Առաքելոցէն քաղուած դրուագներ, իսկ միւս երկուքը ցոյց կու տան Յակոբոս Ջերեզեան և Մատթէոս առաքելոց նահատակութիւնները, որոնց քանդակները ճարտարօրէն շինուած են անվաւեր վկայարանութիւններու հիման վրայ: (Տե՛ս Prosper Viaud ի «Nazareth et ses deux Eglises» գիրքը:)

3. Հիմակ պիտի նկարագրենք Ս. Զաքարիայի հայոց վանքը որ շինուած էր Նազարէթի մօտ գտնուած լերան գագաթը՝ ուրկէ Նազարէթցիները ուզեցին գահավիժել մեր Տէրը: Աւետարանիչը լերան գագաթը կը հասկցնէ «արտեան լերին» բառերով. չի գիտցուիր ինչ պատճառով մեր մատենագրութեան ամէնէն հեղինակաւոր դէմքերէն Զաքարիա Կարողիկոս (Թ. դար), Մագիստրոս Իշխան (ԺԱ. դար), Իգնատիոս Մեկնիչ (ԺԲ. դար) արեւան բառը յատուկ անուն կ'իմանան, ինչպէս կ'երեւի իրենց գրուածքներէն: Միայն Վարդան Վարդապետ (ԺԳ. դար) շիտակ կը հաս-